ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2025թ. թիվ 357-Ա

«ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՓԲԸ-Ի
ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ
Ս.ՎԱՐՈՍՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 188 հոդվածով և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 9)-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2025 թվականի հուլիսի 11-ի թիվ 349-Ա որոշումը և հաշվի առնելով Ս.Վարոսյանի համաձայնությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «Թումանյանի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի տնօրենի պարտականությունների կատարումը, մինչև մրցույթի արդյունքում տնօրենի ընտրությունը, դնել «Թումանյանի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի ընտանեկան բժիշկ Ստեփան Վարոսյանի վրա:

2. «Թումանյանի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի հաշվապահին՝

«Թումանյանի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի կանոնադրությամբ սահմանված տնօրենի լիազորությունների իրականացման համար Ստեփան Վարոսյանին տալ լրավճար «Թումանյանի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի տնօրենի աշխատավարձի 30%-ի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հուլիսի 14-ից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

Recoverable Signature

X

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Signed by: AVETISYAN HOVHANNES 3905890216 Հ.ԱՎԵՏԻՍՅԱՆ

2025թ. հուլիսի 14
ք.Վանաձոր